



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 866-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 29-Ի ԹԻՎ 444-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ՊԵՏՐՈՎԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՆԻԿ ՕԶԱՆՋԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ՄԱՆՈՒՇԱԿ ԹՈՐԳՈՄԻ ՂԱՐԻՔՅԱՆԻ, ԱՐՏԱԿ ՕՆԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ՀՈՎԻԿ ՕՆԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եվ ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 26.12.2002թ. ՀՀ ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Օնիկ Օհանջանի Ավետիսյանի /ծնված 26.04.1954թ-ին/ ընտանիքի անունով փաստաթղթերով ունեցած 1.0701 հա մակերեսով հողամասի չափը, Օնիկ Օհանջանի Ավետիսյանի ընտանիքի անունով կադաստրային գործում առկա, «Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի» 1991 թվականի թիվ 16 որոշումից՝ Գավառ համայնքի կողմից տրված քաղվածքը, որի համաձայն ընտանիքը ստացել է 0,13 հա տնամերձ հողամաս, որից պետական գրանցում է ստացել 0,0776 հա մակերեսով տնամերձ հողամասը (վկայական N 29042022-05-0053) և Օնիկ Օհանջանի Ավետիսյանի դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, որի համաձայն Գավառ համայնքի Հացառատ Թաղամասի Պետրովի 2-րդ փողոց թիվ 25 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափազրվել է /ծածկագիր 05-001-0745-0022/, և նկատի ունենալով, որ Գավառ համայնքի Հացառատ Թաղամասի Պետրովի 2-րդ փողոց թիվ 25 հասցեի հողամասը փաստացի կազմում է 0.30 հա, որից 0.0524 հա հողատարածքը օրենքի ուժով հանդիսանում է Օնիկ Օհանջանի Ավետիսյանի /ծնված 26.04.1954թ-ին/ ընտանիքին պատկանող հողամասը, և հաշվի առնելով, որ փաստացի տիրապետվող 0.30 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառ համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 29-ի թիվ 444-Ա որոշումը:
2. Վերականգնել Գավառ համայնքի Հացառատ Թաղամասի Պետրովի 2-րդ փողոց թիվ 25 հասցեում գտնվող՝ Օնիկ Օհանջանի Ավետիսյանի /ծնված 26.04.1954թ-ին/ ընտանիքի կողմից փաստացի տիրապետվող, գույքային միավորից՝ 0.13հա-ից պետական գրանցում չստացած 0.0524 հա մակերեսով հողամասի Օնիկ Օհանջանի Ավետիսյանի /ծնված 26.04.1954թ-ին/, Մանուշակ Թորգոմի Ղարիբյանի /ծնված 03.10.1958թ-ին/, Արտակ Օնիկի Ավետիսյանի /ծնված 16.01.1980թ-ին/, Հովիկ Օնիկի Ավետիսյանի /ծնված 26.12.1978թ-ին/ հողօգտագործման իրավունքը և փաստաթղթերով ունեցած 1.0701 հա հողամասի 20 տոկոսի, որը կազմում է 0.2140 հա, 26.12.2002թ. ՀՀ ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0.0524 հա + 0.2140 հա = 0.2664 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
3. Գավառ համայնքի Հացառատ Թաղամասի Պետրովի 2-րդ փողոց թիվ 25 հասցեում գտնվող՝ Օնիկ Օհանջանի Ավետիսյանի /ծնված 26.04.1954թ-ին/ ընտանիքի կողմից փաստացի տիրապետվող 0.30 հա հողատարածքից 0.2664 հա մակերեսով՝ որպես օրինական տիրապետվող հողամասին կից, փաստացի ավել օգտագործվող 0.0336 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Գավառ համայնք Հացառատ Թաղամասի Պետրովի 2-րդ փողոց թիվ 25/1 հասցեն և ուղղակի վաճառքի կարգով օտարել Օնիկ Օհանջանի Ավետիսյանին /ծնված 26.04.1954թ-ին/, Մանուշակ Թորգոմի Ղարիբյանին /ծնված 03.10.1958թ-ին/, Արտակ Օնիկի Ավետիսյանին /ծնված 16.01.1980թ-ին/, Հովիկ Օնիկի Ավետիսյանին /ծնված 26.12.1978թ-ին/, հողամասի 1 քմ-ի համար կադաստրային 30%-ի չափով՝ 154.44 /մեկ հարյուր հիսունչորս ամբողջ քառասուչորս/ ՀՀ դրամ՝ ընդհամենը $336 \times 154.44 = 51900$ /հիսունմեկ հազար իննը հարյուր/ ՀՀ դրամ Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին վճարելու պայմանով:
4. 0.2664 հա հողամասին տրամադրել Գավառ համայնք Հացառատ Թաղամասի Պետրովի 2-րդ փողոց թիվ 25 հասցեն:
5. Հանձնարարել աշխատակազմի համապատասխան աշխատակցին՝ օրենքով սահմանված կարգով Օնիկ Օհանջանի Ավետիսյանի /ծնված 26.04.1954թ-ին/, Մանուշակ Թորգոմի Ղարիբյանի /ծնված 03.10.1958թ-ին/, Արտակ Օնիկի Ավետիսյանի /ծնված 16.01.1980թ-ին/, Հովիկ Օնիկի Ավետիսյանի /ծնված 26.12.1978թ-ին/, հետ կնքելու 0.0336 հա մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Գ. ԴԱՇՏՈՅԱՆ

20 __ թ. _____
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghagapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 867-Ա


ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐՈՒԽԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՈՒՄԱՆ ՀԱՎԱՍՏԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8
ՀԱՍՅԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎՐՈՒՅՐ ԽԱՉՈՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ,
ՄԱՆՎԵԼ ՎՐՈՒՅՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական
բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական
ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության
29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում
ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության,
անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,
հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների
գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ.-ի N 233-Ն
պահանջներով, հիմք ընդունելով 25.08.2022թ. տրված Սարուխան համայնքի հողային
բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 02.04.1992թ. թիվ 8 և 28.05.1993թ. թիվ
11 որոշումներից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված
05.10.2022թ. գույքի նկատմամբ ժառանգ Վրույր Խաչոյի Մուրադյանի /ծնված 10.02.1942թ.-ին/
ղիմուր, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների
հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Սարուխան բնակավայրի Գուսան
Հավասու փողոց թիվ 8 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.22 հա, ինչը
փաստացի կազմում է 0.22738 հա, որը Վրույր Խաչոյի Մուրադյանին /ծնված 10.02.1942թ./
ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական
կառուցված 218.30 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1974-1980թթ./
կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.22738 հա հողամասը չի գտնվում ՀՀ
հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես
ևս ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում
սերվիտուտ, որոշում եմ

1. Վերականգնել Գավառ համայնքի Սարուխան բնակավայրի Գուսան Հավասու փողոց թիվ 8 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Վրույր Խաչոյի Մուրադյանի /ծնված 10.02.1942թ-ին/, Մանվել Վրույրի Մուրադյանի /ծնված 31.08.1969թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.22 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00738 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.22738 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 218.30 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1974-1980թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Սարուխան բնակավայր, Գուսան Հավասու փողոց, թիվ 8 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



20 __ թ. _____
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԳԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 868-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Քյարամ Մամեյի Մատոյանը / անձնագիր 004776159, ՀՕՀ՝ 2211680410, հասցեն՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Վաղարշապատ, Թորոս Թորամանյան փողոց, N30/, զավթել է սեփականության իրավունքով պետությանը պատկանող հողատարածքը՝ ինչի կապակցությամբ 2022 թվականի հոկտեմբերի 07-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված տուգանքի գումարի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի կողմից տրամադրված տվյալների՝ նշված գույքը հանդիսանում է պետական սեփականություն, որը Քյարամ Մամեյի Մատոյանի կողմից առանց համապատասխան թույլտվության զավթել է և իրականացվել է անասնազվաքանակի արածեցում, ինչն հանդիսանում է վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի դրույթների խախտում: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվություն սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի /երկու հարյուր հազար դրամ/ չափով:

2022 թվականի հոկտեմբերի 07-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի հոկտեմբերի 20-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է (հիմք՝ ծանուցումն առձեռն ստանալը մերժելու հավաստումը և ՀՀ ինտերնետով ծանուցման կայքի 12.10.2022թ ծանուցումը) քաղաքացի Քյարամ Մատոյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքներն ու օրինական շահերը:

Համայնքի ղեկավարը, համաձայն Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5) կետի, համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանքներ /նախագծման թույլտվություն/, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ կանխարգելում ու կասեցնում և վերացնում է հողօգտագործումը:

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, իսկ 28) կետի՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածը սահմանում է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի 2-րդ մասի, տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նույն օրենսգրքի 84-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմնի անունից վարչական իրավախախտման վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի համայնքի ղեկավարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրությամբ, Տեղական ինքնակառավարման մասին, վարչական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքների, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթներով, **որոշում եմ**

1. Պարտավորեցնել Քյարամ Մամեյի Մատոյանին անհապաղ կասեցնել (դադարեցնել) Գավառ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը և նշված տարածքում անասնազվսաքանակի արածեցումը:
2. Գավառ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասը զավթելու համար Քյարամ Մամեյի Մատոյանին տուգանել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
3. Տուգանքի գումարը ենթակա է վճարման Գավառի համայնքապետարանի 900175101105 Հաշվեհամարին:
4. շՍույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Գավառ համայնքի ղեկավարը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2022թ. նոյեմբերի 01
 Բ. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 869-Ա


ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԻ ԱԼՎԵՐԻԿ ԳԵՏԵՎՈՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԿԱՐԱՊԵՏԻ ՉԱՏԻԿՅԱՆԻ, ՌՈԶԱ ԿԱՐԱՊԵՏԻ ՉԱՏԻԿՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏԻ ՉԱՏԻԿՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական
բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական
ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության
29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում
ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության,
անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,
հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների
գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն
պահանջներով, հիմք ընդունելով 15.08.2022թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և
սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի
ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 06.06.2022թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ
Ալվերիկ Գետևոնի Հարությունյանի /ծնված 20.09.1936թ-ին/ ղիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի
կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ
համայնքի Միքայելյան փողոց 4-րդ անցուղի թիվ 10 հասցեում գտնվող հողամասը չափազանցվել է,
հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.11000 հա, որը Ալվերիկ Գետևոնի
Հարությունյանին /ծնված 20.09.1936թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է
և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 298.00 քմ ընդհանուր մակերեսով շենք-
շինությունների /կառուցված 1964թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.11000
հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված
սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների
օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ՝**

1. Վերականգնել Գավառ համայնքի Միքայելյան փողոց 4-րդ անցուղի թիվ 10 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ալվերիկ Գետտոնի Հարությունյանի /ծնված 20.09.1936թ-ին/, Հովհաննես Կարապետի Չատիկյանի /ծնված 30.08.1958թ-ին/, Ռոզա Կարապետի Չատիկյանի /ծնված 09.10.1966թ-ին/, Արմեն Կարապետի Չատիկյանի /ծնված 08.12.1967թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.03000 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.11000 հա բնդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 298.00 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1964թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Միքայելյան փողոց, 4-րդ անցուղի, թիվ 10 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



20 __ թ. _____
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 870-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՍԵՆԻԿ ՄԵԽԱԿԻ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ, ՄԱՐԳԱՐԻՏ ՄԵԽԱԿԻ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական
բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական
ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության
29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում
ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության,
անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,
հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների
գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն
պահանջներով, հիմք ընդունելով 18.10.2022թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և
սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի
ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 14.09.2022թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ
Վարսենիկ Մեխակի Մարուխյանի /ծնված 11.05.1957թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի
կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ
համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 25 հասցեում գտնվող հողամասը չափազրվել է,
հատկացվել է 0.02 հա, ինչը փաստացի կազմում է 0.03761 հա, որը Վարսենիկ Մեխակի
Մարուխյանի /ծնված 11.05.1957թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և
հաշվի առնելով, որ օրինական կառուցված 183.70 քմ ընդհանուր մակերեսով շենք-
շինությունների /կառուցված 1910-1970թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ
0.03761 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված
սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների
օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 25 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Վարսենիկ Մեխակի Մարուխյանի /ծնված 11.05.1957թ-ին/, Մարգարիտ Մեխակի Մարուխյանի /ծնված 19.09.1966թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.02 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.01761 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.03761 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 183.70 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1910-1970թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Սայաթ-Նովա փողոց, թիվ 25 հասցեն:
3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՐԿԻՐՈՍՅԱՆ



20 __ թ. _____
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghagapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 871-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ
12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՎԵՏԻՔ ՊԱՐՈՒՅՐԻ ՀԱԿՈՔՅԱՆԻ,
ՌԵՓՍԻԿ ԳԱՐԵԿԻՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական
բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական
ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության
29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում
ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության,
անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման,
հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների
գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն
պահանջներով, հիմք ընդունելով 06.10.2022թ. տրված Գեղարքունիք համայնքի հողային
բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 01.02.1991թ. թիվ 1ա որոշումից
քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 13.11.2009թ./ գույքի
նկատմամբ ժառանգ Ավետիք Պարույրի Հակոբյանի /ծնված 25.03.1967թ-ին/ դիմումը,
«Խաչատուր Ավետյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը,
համաձայն որոնց Գավառ համայնքի Գեղարքունիք բնակավայրի Վարդան Ստեփանյան փողոց
թիվ 12 հասցեում գտնվող հողամասը չափազրվել է, հատկացվել է 0.09 հա, ինչը փաստացի
կազմում է 0.09635 հա, որը Ավետիք Պարույրի Հակոբյանին /ծնված 25.03.1967թ./ ժառանգության
իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 256.34 քմ
ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1990թ./ կառուցման ու սպասարկման
համար անհրաժեշտ 0.09635 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով
սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային
օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ՝**

1. Վերականգնել Գավառ համայնքի Գեղարքունիք բնակավայրի Վարդան Ստեփանյան փողոց
թիվ 12 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ռեփսիկ Գարեկինի Ավետիսյանի
/ծնված 06.08.1934թ./, Ավետիք Պարույրի Հակոբյանի /ծնված 25.03.1967թ./


հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.09 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00635 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.09635 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 256.34 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1990թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Գեղարքունիք բնակավայր, Վարդան Ստեփանյան փողոց, թիվ 12 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



20 __ թ. _____
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavarigaghapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 872-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՐԵՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԻ ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՔԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 21.10.2022թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից բաղկացած, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 20.10.2022թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Սամվել Ավետիքի Պողոսյանի /ծնված 15.04.1959թ./ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Կարեյան փողոց թիվ 21 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.1 հա, ինչը փաստացի կազմում է 0.10089 հա, որը Սամվել Ավետիքի Պողոսյանի /ծնված 15.04.1959թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 332.10 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1959-1980թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10089 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի Հացառատ թաղամասի Կարեյան փողոց թիվ 21 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սամվել Ավետիքի Պողոսյանի /ծնված 15.04.1959թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.1 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00089 հա հողամասի


գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.10089 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 332.10 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1959-1980թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Հացառատ թաղամաս, Կարեյան փողոց, թիվ 21 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



20 __ թ. _____
ք.Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվականի N 873-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Քաղաքացի Կարեն Արմենակի Ղարիբյանը (անձնագիր՝ AS0440248, ՀՕՀ՝ 3001880635, հաշվառված ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Գավառ համայնք գ. Լանջաղբյուր Տիգրան-Մեծի փող. տուն 32) հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունները, ինչի կապակցությամբ 2022 թվականի հոկտեմբերի 14-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գումարների գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի կողմից տրամադրված ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող՝ Գավառ համայնքի 05-038-0048-0011, 05-038-0069-0002, 05-038-0202-0925, 05-038-0079-0020, 05-038-0102-0264, 05-038-0201-0168, 05-038-0048-0009, 05-038-0202-0484, 112-005, կադաստրային ծածկագրով անշարժ գույքերը, ՀՀ ՀՔԲ-ի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման ու գնահատման տվյալների MERCEDES-BENZ E 230 մակնիշի 36 SX 232 պետհամարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում են Կարեն Արմենակի Ղարիբյանի սեփականությունը:

Անշարժ գույքերի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 36943/երեսուրկեց հազար ինն հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամ, ինչը 2015-2021թթ. ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Կարեն Արմենակի Ղարիբյանի կողմից նշված ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 16006/տասնվեց հազար վեց/ՀՀ դրամի չափով:

Փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 22500/քսաներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ինչը 2021թ. ժամանակահատվածում չի վճարվել, իսկ Կարեն Արմենակի Ղարիբյանի կողմից նշված ժամանակահատվածի գույքահարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է գույքահարկի համար տույժ՝ 2844/երկու հազար ութ հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամի չափով: 2022 թվականի հոկտեմբերի 14-ին «Վարչարարության և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի „բ“ կետի հիմքով Գավառի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի հոկտեմբերի 31-ին հրավիրվել են վարչական վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ 14.10.2022թ. ծանուցում azdarar.am կայքում/ Կարեն Արմենակի Ղարիբյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին: 31.10.2022թ. վարչական վարույթի լուսմներն իրականացվել են պատշաճ ծանուցված Կարեն Արմենակի Ղարիբյանի բացակայությամբ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածի փոխադրամիջոցի գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի տարեկան գումարները /այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները / անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 240-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի՝ տեղական հարկերի գծով հարկային պարտավորությունների կատարում /մարում/ է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի /կամ/ տուգանքների գումարների վճարումը համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող տեղական բյուջեի գանձապետական հաշվին:

